



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 ապրիլի 2017 թվականի N 388 - Ն

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 641-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 465-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի 235-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի «Գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների ու դրանց

գնահատությունների, ինչպես նաև փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման կարգը սահմանելու մասին» N 641-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի «Հողի սեփականատերերի և պետական սեփականություն հանդիսացող հողի անհատույց (մշտական) օգտագործողների հողերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 10-ի N 629 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 465-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. ապրիլի 20  
Երևան

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Կ Ա Ր Գ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ  
ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են կազմակերպությունների և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ) անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղեկություններն անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու կարգի հետ կապված հարաբերությունները: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղեկություններն անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից ներկայացվում են Երևանի համայնքին՝ խմբավորված՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի համապատասխան վարչական շրջանների:

2. Սույն կարգում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հիմնական հասկացությունները:

3. Անշարժ գույքի կադաստր վարող մարմինը տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացնում՝

1) գնահատման կամ վերագնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված (վերագնահատված)՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների)

վերաբերյալ ամփոփ տեղեկությունները մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ համաձայն NN 1 և 2 ձևերի և դրանց լրացման համար նախատեսված կարգի.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն NN 3 և 4 ձևերի և դրանց լրացման համար նախատեսված կարգի.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն NN 5 և 6 ձևերի և դրանց լրացման համար նախատեսված կարգի.

4) սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված տեղեկություններն անշարժ գույքի կադաստր վարող մարմինը ներկայացնում է էլեկտրոնային տեսքով՝ տեղեկությունները տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում, և յուրաքանչյուր համայնք իր վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի մասին տեղեկություններից օգտվում է նախօրոք տրամադրված մուտքի անվան ու գաղտնաբառի միջոցով.

5) անշարժ գույքի կադաստր վարող մարմինը հաշվառող մարմինների կողմից պահանջի դեպքում՝ 5-օրյա ժամկետում, տրամադրում է անհրաժեշտ տեղեկությունների թղթային տարբերակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ձևաթղթի դիմային մասը**

**Ձև N 1**

Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերազնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի

Մարզը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Համայնքը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Գնահատումը՝  (օրը, ամիսը, տարեթիվը) **դրությամբ** Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի  (անվանումը) **տարածքային (մարզային) ստորաբաժանում**

**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 227-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕՐՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միավորի քանակը	Արվիկային ծածկագիրը	N N/4	Սեփականատիրոջ (համասեփականատերերի)՝										Հողամասի բարելավումների (շինությունների)							Իրավունքների՝				
			Ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեն						Ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը	Ֆիզիկական անձի անունը	Ֆիզիկական անձի հայրանունը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը	Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության <N>-N համարը	Նվաճումները	հասցեն			Օբյեկտը սահմանված հարկվելի օբյեկտն ըստ նպատակային նշանակության	Միջուկային տարածքային	Ստորակառուցվածքային	Վարչատարածքային (տուն)	Միջուկային գրանցման անստիժի (օրը, ամիսը, տարեթիվը)	Սեփականության ձևը (ամբողջ կամ ընդհանուր բաժնային ընդհանուր համատեղ)	Գրանցման ստիժիկի լրացուցիչ տվյալներ
			Մեծություն	համայնքը (կադաստրի շրջանը)	կողմը, նրբանցքը, փակուղիին և այլն	շենքը/տունը (համարը)	բնակարանը (համարը)	կողմը, նրբանցքը, փակուղիին և այլն							շենքը/տունը (համարը)	բնակարանը (համարը)								
0	0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	
		1																						
		2																						
		3																						

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ  
(ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Ձևաթղթի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար ամփոփ ցուցակի ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:

2. Անշարժ գույքի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի տվյալները լրացվում է հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:

3. Ամփոփ տեղեկությունների 1-0-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին, իսկ 2-0-րդ սյունակներում՝ արխիվային ծածկագիրը:

4. Ամփոփ տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) հերթական համարը:

1) Համասեփականատերերի համար նույն գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի հերթական համարը չի փոփոխվում:

5. Ամփոփ տեղեկությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) սեփականատիրոջ (համասեփականատերերի) հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:

6. Ամփոփ տեղեկությունների 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) սեփականատիրոջ (համասեփականատերերի) տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Ֆիզիկական անձ կամ

կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար ամփոփ տեղեկությունների 8-11-րդ պունակները չեն լրացվում:

7. Ամփոփ տեղեկությունների 12-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) կադաստրային ծածկագիրը:

1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

8. Ամփոփ տեղեկությունների 13-րդ, 14-րդ և 15-րդ պունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) հասցեի տեքստային տվյալները:

1) Համասեփականատերերի համար միևնույն անշարժ գույքի հասցեն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

9. Ամփոփ տեղեկությունների 16-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ նպատակային նշանակության՝

1) նպատակային նշանակության տվյալների առումով բնակելի նշանակության դեպքում լրացվում է՝ 1 (ընդ որում, անհատական բնակելի տան համար՝ 1/1, բնակարանի համար՝ 1/2, այգետնակի (ամառանոցի) համար՝ 1/3, բազմաբնակարան բնակելի շենքի համար՝ 1/4, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի համար՝ 1/5, ավտոտնակի համար՝ 1/6), հասարակական նշանակության դեպքում՝ 2, արտադրական նշանակության դեպքում՝ 3.

2) համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տվյալներն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

10. Ամփոփ տեղեկությունների 17-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) համապատասխան գործառնական նշանակության տեքստային տվյալները:

1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) գործառնական նշանակության տվյալներն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չեն լրացվում:

11. Ամփոփ տեղեկությունների 18-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի անավարտ (կիսակառույց) բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանին համապատասխանող նշումը՝ «անավարտ»-ի դեպքում՝ 0, «մինչև 50%»-ի դեպքում՝ 1, «50-80%»-ի դեպքում՝ 2, «80% և ավելի»-ի դեպքում՝ 3:

1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանի տվյալներն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չեն լրացվում:

12. Ամփոփ տեղեկությունների 19-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) կադաստրային արժեքը՝ արտահայտված դրամով:

1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

13. Ամփոփ տեղեկությունների 20-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են հողամասի բարելավման (շինության) նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005):

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի բարելավման (շինության) նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

14. Ամփոփ տեղեկությունների 21-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) սեփականատիրոջ համար լրացվում է 1, յուրաքանչյուր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն):

15. Ամփոփ տեղեկությունների 22-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:



Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի

Մարզը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Համայնքը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Գնահատում՝  (օրը, ամիսը, տարեթիվը) դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի  (անվանումը) տարածքային (մարզային) ստորաբաժանում

**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 227-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕՐՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միավորի բանային	Արևիկային ծածկագիրը	NN ը/Կ	Սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի՝										Հողամասի՝										Իրավունքների՝			
			Ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի					Ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը	Ֆիզիկական անձի անունը	Ֆիզիկական անձի հայրանունը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը	Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն	կադաստրային ծածկագիրը	գտնվելու վայրի՝		մրցատարածության նշանակությունը	գործառնական նշանակությունը (հողատեսքը)	հողակադաստրային շրջանը կամ գոտին	հողատեսքի գնահատման խումբը	չափը (հեկտար)	գտնվելու վայրի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ	կադաստրային գոտու եկամուտը (դրամ/հա)	կադաստրային արժեքը (դրամ/հա)	պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	սեփականություն ձևը (ամբողջ կամ ընդհանուր ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ)	գրանցման տարեկալի լրացուցիչ տվյալներ
			մարզը	համայնքը	փողոցը, նրբանցքը, փակուղին և այլն	շենքը/տունը (համարը)	բնակարանը (համարը)							փողոցը, նրբանցքը, փակուղին և այլն	շենքը/տունը (համարը)											
0	0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
		1																								
		2																								

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝  
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ)  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Ձևաթղթի վերնամասի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար ամփոփ ցուցակի ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:

2. Հողամասի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի տվյալները լրացվում են հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:

3. Ամփոփ տեղեկությունների 1-0-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին, իսկ 2-0-րդ սյունակներում՝ արխիվային ծածկագիրը:

4. Ամփոփ տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր հողամասի հերթական համարը:

1) Համասեփականատերերի համար նույն գույքային միավոր հանդիսացող հողամասի հերթական համարը չի փոփոխվում:

5. Ամփոփ տեղեկությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:

6. Ամփոփ տեղեկությունների 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության

պետական ռեզիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

1) Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար ամփոփ տեղեկությունների 8-11-րդ պունակները չեն լրացվում:

7. Ամփոփ տեղեկությունների 12-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի կադաստրային ծածկագիրը:

1) Համասեփականատերերի համար հողամասի կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

8. Ամփոփ տեղեկությունների 13-րդ և 14-րդ պունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները:

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի գտնվելու վայրի հասցեն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

9. Ամփոփ տեղեկությունների 15-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին համապատասխան նպատակային նշանակությունը՝

1) գյուղատնտեսական նշանակության դեպքում լրացվում է՝ 1, բնակավայրերի նշանակության դեպքում՝ 2, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության դեպքում՝ 3, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների դեպքում՝ 4, հատուկ պահպանվող տարածքների դեպքում՝ 5, հատուկ նշանակության հողերի դեպքում՝ 6, անտառային հողերի դեպքում՝ 7, ջրային հողերի դեպքում՝ 8, պահուստային հողերի դեպքում՝ 9.

2) համասեփականատերերի համար միևնույն հողամասի նպատակային նշանակությունն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

10. Ամփոփ տեղեկությունների 16-րդ պունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան յուրաքանչյուր հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

1) գյուղատնտեսական նշանակության հողերի համար ջրովի վարելահողերի դեպքում լրացվում է 1/1, անջրդի վարելահողերի դեպքում՝ 1/2, բազմամյա տնկարկների համար խաղողի դեպքում՝ 1/3, կորիզավորի դեպքում՝ 1/4, հնդավորի դեպքում՝ 1/5, խոտհարքների համար՝ 1/6, արոտավայրերի համար՝ 1/7, այլ գյուղատնտեսական հողատեսքերի համար՝ 1/8.

2) բնակավայրերի հողերի համար բնակելի կառուցապատման հողերի դեպքում լրացվում է 2/1, հասարակական կառուցապատման հողերի դեպքում՝ 2/2, խառը կառուցապատ-

ման հողերի դեպքում՝ 2/3, ընդհանուր օգտագործման հողերի դեպքում՝ 2/4, այլ հողերի դեպքում՝ 2/5.

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար արդյունաբերական օբյեկտների դեպքում լրացվում է 3/1, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների դեպքում՝ 3/2, պահեստարանների դեպքում՝ 3/3, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դեպքում՝ 3/4.

4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի համար էներգետիկայի հողերի դեպքում լրացվում է 4/1, կապի հողերի դեպքում՝ 4/2, տրանսպորտի հողերի դեպքում՝ 4/3, կոմունալ ենթակառուցվածքների հողերի դեպքում՝ 4/4.

5) հատուկ պահպանվող տարածքների հողերի համար բնապահպանական հողերի դեպքում լրացվում է 5/1, առողջարարական նպատակներով նախատեսված հողերի դեպքում՝ 5/2, հանգստի համար նախատեսված հողերի դեպքում՝ 5/3, պատմական և մշակութային հողերի դեպքում՝ 5/4.

6) համասեփականատերերի համար միևնույն հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

11. Ամփոփ տեղեկությունների 17-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի համապատասխան հողակադաստրային շրջանը կամ գոտին:

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի համապատասխան հողակադաստրային շրջանը կամ գոտին առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

12. Ամփոփ տեղեկությունների 18-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման համապատասխան խումբը:

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

13. Ամփոփ տեղեկությունների 19-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր հողամասի չափը՝ հեկտարներով:

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի չափն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

14. Ամփոփ տեղեկությունների 20-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի գտնվելու վայրի վերաբերյալ լրացուցիչ տվյալները՝ բնակավայրի սահմաններից ներս գտնվող հողերի համար լրացվում է 1, բնակավայրի սահմաններից դուրս գտնվող հողերի համար՝ 2:

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի գտնվելու վայրի վերաբերյալ լրացուցիչ տվյալներն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

15. Ամփոփ տեղեկությունների 21-րդ և 22-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր հողամասի համար լրացվում է կադաստրային գնահատման արդյունքում որոշված կադաստրային գուտ եկամուտը կամ կադաստրային արժեքը՝ արտահայտված դրամով (1 հեկտարի համար)՝

1) ամփոփ տեղեկություններում լրացվում է 21-րդ և 22-րդ սյունակներից միայն մեկը.

2) համասեփականատերերի համար միևնույն հողամասի կադաստրային գնահատման արդյունքում որոշված կադաստրային գուտ եկամուտը կամ կադաստրային արժեքն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

16. Ամփոփ տեղեկությունների 23-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005):

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

17. Ամփոփ տեղեկությունների 24-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր հողամասի սեփականատիրոջ կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի համար լրացվում է 1, յուրաքանչյուր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն):

18. Ամփոփ տեղեկությունների 25-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:

Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի

Մարզը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Համայնքը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Փոփոխումը՝  (օրը, ամիսը, տարեթիվը) **ընթացքում** Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի  (անվանումը) **տարածքային (մարզային) ստորաբաժանում**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 227-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕՐՅԵԿՏ ՀԱՄԱՐԿՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միավորի բանալին	Արիտիկային ծածկագիրը	NN ը/Կ	Նոր սեփականատիրոջ (համասեփականատերերի)՝									Նախկին սեփականատիրոջ (համասեփականատերերի)՝				Հողամասի բարելավումների (շինությունների)				Իրավունքների՝							
			Ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեն						Ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը	Ֆիզիկական անձի անունը	Ֆիզիկական անձի հայրանունը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը	Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն	Ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը	Ֆիզիկական անձի անունը	Ֆիզիկական անձի հայրանունը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը	Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն	կարաստրային ծածկագիրը	հասցեն			օրենքով սահմանված հարկվող օբյեկտն ըստ նախատվային տշանակության	կարաստրային արժեքը (դրամ)	պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	սեփականության ձևը (ամբողջ կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեր)	գրանցման ստրվելու լրացուցիչ տվյալներ
			մարզը	համայնքը (վարչական շրջանը)	փողոցը, նորահանգը, փակուղին և այլն	շենքը /տունը (համարը)	բնակարանը (համարը)	փողոցը, նորահանգը, փակուղին և այլն												շենքը /տունը (համարը)	բնակարանը (համարը)						
0	0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	
		1																									
		2																									

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ  
ԿԱՐԳԸ**

1. Ձևաթղթի վերնամասի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար ամփոփ ցուցակի ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:

2. Անշարժ գույքի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի տվյալները լրացվում են հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:

3. Տեղեկությունների 1-0-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին, իսկ 2-0-րդ սյունակներում՝ արխիվային ծածկագիրը:

4. Տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) հերթական համարը:

1) Համասեփականատերերի համար նույն գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի հերթական համարը չի փոփոխվում:

5. Տեղեկությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) նոր սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:

6. Տեղեկությունների 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և համապատասխանաբար 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի բարելավման (շինության) նոր սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ ու նախկին սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ կազմակերպական-իրավական ձևը),

Ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար տեղեկությունների 8-11-րդ և 13-16-րդ սյունակները չեն լրացվում:

7. Տեղեկությունների 17-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրը:

1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

8. Տեղեկությունների 18-րդ, 19-րդ և 20-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) հասցեի տեքստային տվյալները:

1) Համասեփականատերերի համար միևնույն անշարժ գույքի հասցեն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

9. Տեղեկությունների 21-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ նպատակային նշանակության՝

1) նպատակային նշանակության տվյալների առումով բնակելի նշանակության դեպքում լրացվում է՝ 1 (ընդ որում, անհատական բնակելի տան համար՝ 1/1, բնակարանի համար՝ 1/2, այգետնակի (ամառանոցի) համար՝ 1/3, բազմաբնակարան բնակելի շենքի համար՝ 1/4, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի համար՝ 1/5, ավտոտնակի համար՝ 1/6), հասարակական նշանակության դեպքում՝ 2, արտադրական նշանակության դեպքում՝ 3.

2) համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տվյալները առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

10. Տեղեկությունների 22-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը՝ արտահայտված դրամով:



1) Համասեփականատերերի համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքն առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

11. Տեղեկությունների 23-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր անշարժ գույքի՝ հողամասի բարելավման (շինության) նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվն (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005):

1) Համասեփականատերերի համար միևնույն հողամասի բարելավման (շինության) նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

12. Տեղեկությունների 24-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր հողամասի բարելավման (շինության) սեփականատիրոջ համար լրացվում է 1, յուրաքանչյուր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն):

13. Տեղեկությունների 25-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:

Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի

Մարզը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Համայնքը՝  (անվանումը)  (ծածկագիրը)

Փոփոխում՝  (օրը, ամիսը, տարեթիվը) **ընթացքում** Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի

տարածքային (մարզային) ստորաբաժանում (անվանումը)

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 227-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միավորի բանալին	Մակերևույթի ծածկագիրը	N	Նոր սեփականատիրոջ (սեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի՝										Նախկին սեփականատիրոջ (սեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի մշտական օգտագործողի՝										Հողամասի՝										Իրավունքների՝		
